




ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

Հ. ՂԱԶԱՐ ՎՐԴ. ՍՐԱՊԻՈՆԵԱՆԻ

(1887-1960)



մահամերձի մը սնարին, միշտ աղօթքի միմունջ մը շրթներուն մէջ սրբանուէր:

Ու կը սիրէինք զինքը: Իսկապէս ցաւազին եղաւ մեր վիշտը, երբ երկու տարի առաջ, ամառուան տաքերուն, տեսանք զինքը յանկարծակի ընկճուած, անկողին դամուած: Այնուհետեւ, հակառակ բժշկական ամէն տեսակ դարմաններու եւ խնամքներու, հետզհետէ քայքայուեցաւ իր երկաթեայ առողջութիւնը. բարդուեցան հիւանդութիւնները. բայց ինքը համակամ, բոլորովին Աստուծոյ յանձնուած, անոյշ ժպիտ մը շրթներուն վրայ, օրէ օր կը սպասէր երջանիկ ժամուն՝ միանալու իր պաշտելի Յիսուսին:

Անակնկալ թոքատապ մը, Լիտուի հիւանդանոցին մէջ, ուր ամիսէ մը ի վեր կը գտնուէր, բժշկական մասնաւոր խնամքի ենթակայ, յետին հարուածը տրւաւ: Վերջին շաբաթներուն՝ անպակաս էին իր սնարէն միաբանները. ու բոլորս փոխ ի փոխ, գիշեր ու ցերեկ, կը հըսէինք իր սնարին: Օրինակելի բարեպաշտութեամբ ընդունեցաւ վերջին անգամ Ս. Խորհուրդները, եւ անխռով փակեց իր աչքերը Յունուար 29ին, յետ միջօրէի:

Ո՛րքան կը փափաքէր վաճառել մէջ մեռնիլ ու հոն թաղուիլ. այնքան կը սիրէր իր վանքը:

Ամառուան արձակուրդին, երբ ամառանոց կը տանէինք զինքը, դժուարութեամբ կը համակամէր. մի գոցէ իր վաճառէն հեռու հողաթումբի մը տակ ծածկուէր:

Վանքի պահապան հրեշտակը կը կոչէինք զինքը. Փիղիքապէս կայտառ ու զօրաւոր, առողջ ու վայելչադէմ կերպարանքի մը տակ, զոր շատեր Մովսէս մարգարէին կը նմանցնէին - սկսեալ Յրանսական Ծերակոյտի Նախագահ՝ Մոնէթը-վիլէն - կը կրէր վեհանձն եւ բոլորանուէր սիրտ մը, սիրտ մը խոնարհ եւ համեստ, միշտ պատրաստ՝ ամէն տեսակ ծառայութեան: Շատ տարիներէ ի վեր հիւանդապահն էր վանքին. մեծին ու փոքրիկին անխորժ, իսկական հայրիկ մըն էր, որ յաճախ գիշեր ու ցերեկը իրարու կը խառնէր, հսկելու համար հիւանդի մը կամ

Յունուար 30ին, Հ. Ղազար կը դառնար իր վանքը. տիրերգակ զանգը, ողբաձայն սաղմոսներու հետ կը խլէր ամէնուս արցունքը. յետին ողջոյնի պահն էր. խունկով եւ աղօթքով հեծկլտուն, կ'առաջնորդէինք թափօրով դէպի գերեզման՝ Միւթարեան վաստակաւորներու յետին հանգրստարանը:

Ու հոն, իր պաշտելի եւ սիրելի հողին մէջ կը հանդէսէր Հ. Ղազար:

Ո՛րքան սիրած էր իր վանքը. տարիներով սիրտ եւ ջանք թափած էր անոր բարեգործութիւն. ո՛րքան հսկած էր գործաւորներուն վրայ՝ նորակառոյց պարիսպներուն շինութեան ընթացքին: Ու վանքը տեսած էր զինքը մերթ մատակարար, մերթ գործակալ, միշտ անձնուէր ու զոհաբերուող:

Կովկասի Արտանուշէն եկած էր տաճարաւոր տարեկանին Ս. Ղազար. եւ երջանիկ բախտն ունեցած էր ծերունադարձ Հ. Ալիշանի ձեռքէն ընդունելու սուրբ ըզրեատը: Յուզումով կը յիշէր այս պարագան երջանիկ վարդապետը:

Արտանուշէն բերած էր նաեւ անոյշ եւ հեղահամբոյր բնութիւնը: «Արտն անոյշ է, հացն անոյշ է», կ'ըսէր միշտ, երբ հարցնէինք իր ծննդավայրին մասին: Արդեօք այդ անուշութիւնն էր որ զինք դարձուցած էր նաեւ «վարդանոյշ»ի վարպետ, զոր այնքան հաճոյքով կը պատրաստէր, զոր հելով իր թանկագին ժամերը, վանքի հիւրերուն արժանավայել մեծարանք մատուցանելու մտահոգութեամբ:

1905ին կ'առնէր Ղազար անունը. ասով աւելի եւս կը փարէր իր վանքին: 1911ին արդէն իսկ քահանայական աստիճանին

բարձրացած՝ կը նուիրուէր առաքելական գործունէութեան: Ու նախ տասը տարի խնամակալ հիւանդապահը կ'ըլլար ծերունադարձ Արքեպսկ. Կիւրեղեան Աբբահօր: Այդ թուականէն կը սկսէր պահապան հրեշտակի իր դերը:

Վանքի շրջանակէն դուրս՝ Լիտուի մէջ յարգուած ու փնտռուած խորհրդական խոստովանահայրն էր, ժողովուրդին եւ հաւատաւոր կուսաններու հաստատութեանց մօտ: Ու բոլորն ալ այսօր կ'ողբան իր կորուստը:

Իր հիւանդապահի երկարամեայ պաշտօնին հետ՝ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւէր նորահաս սերունդին յառաջագիժութեան. կը խօսակցէր յաճախ երիտասարդ վարդապետներուն հետ, անոնց պրակտիկ ուսումնասիրութիւններուն մասին, կը քաջալերէր միշտ հայրական անոյշ խօսքերով:

Մինչեւ վերջին ամիսներուն՝ ուշի ուշով կը հետեւէր մեր ազգային մամուլին. հաւատարիմ ընթերցող մըն էր «Հայրենիք» ամսագրին:

Ու հիմա ան կը հանդէսէ Հ. Ալիշանի մօտիկ, մօտիկ նաեւ այն վարդապետներուն՝ տիկ, մօտիկ նաեւ այն վարդապետներուն՝ որոնք իր ձեռքերուն մէջ Աստուծոյ յանձնած էին իրենց հողին. հին ու նոր բոլոր վաստակաւորներու շարքին:

Բայց դուռն, սիրելի Հ. Ղազար, կ'ապրիս մեր բոլորի հողիներուն մէջ. ու պատահեա՛նք թէ Աստուած լուսեղէն չքնաղ վստահ ենք թէ Աստուած լուսեղէն չքնաղ պատկով մը զարդարած է հիմա քու ճակատդ բազմաբղիւն, փոխան այն խոնարհ ծառայութիւններուն, որոնք թանկարժէք են Աստուծոյ համար, երկնքի համար:

Դուռն չես մեռած, սիրելի Հ. Ղազար:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ